

նիդակը անոր մէջ մխրճեց եւ սպաննեց զայն, եւ ան զնաց (եւ) բերդին մէջ խաղաղութեամբ (այսինքն անվնաս) : Եւ երբ երեկոյ եղաւ անոնք որ բերդին մէջ էին ուրիշ յոյս չունէին բացի լալէ եւ խոնարհ կերպով Աստուծոյ աղօթելէ՝ որպէսդի ան զիրենք փրկէ : Եւ բարեպաշտ կիրն, Իսաակի կողակիցը, բոլոր զիշերը անցուց որդին, որ ծծկեր էր, Աստուծոյ յանձնելով, լալագին և արցունքով : Եւ այն ատեն արշալոյսին Իսաակ հասաւ իր քաջ զինուորներով : Եւ Քուրտանայենները, որոնք իրենց կոնակը զարձուցած էին փախչելու համար, արզիլուեցան ձիւնին պատճառաւ : Եւ այս կերպով անոնց մեծագոյն մասը բնաջնջուեցան եւ սպանուեցան, եւ քիշեր՝ որոնք ազատեցան՝ առաջնորդ մը ընտրեցին Հարուն անունով եւ Ալի զայն սպաննեց : Եւ անկէ վերջ (բարձրացաւ) Բարէկ, ջորեպան մը» :

Բար Հերրայուսի վերի վկայութեան առաջին մասը անտարակոյս կը վերաբերի Բարակի արարներէն պարտութեան, Հայաշխարհ ապստամբելուն եւ Սահլէ բռնուելուն : Սակայն նոյն այս պատմութիւնը Բար Հերրայուս, այսինքն Բարակի վախճանը, կը պատմէ իր գործին մէջ 837 տարւոյն զիմաց ըսելով. «Երբ Բարակ, խառնազգի կապտամբը, տեսաւ որ իր կուսակիցները անգոր են, իր զրամները բեռցաւ (գրաստներու) եւ իր մարդոցմէն չորս հարիւրին հետ փախաւ դէպի Հոռոմաց երկիրը : Եւ երբ Հայաստան հասաւ, որոշ ազնուական մը՝ որուն անունը Խթէֆանա էր, զինքը շողմեց եւ զինքը իր տունը տարաւ իրր թէ անոր պատիւ ընելու, սակայն անոր ևրկաթ կապանքներ զարկաւ : Եւ երբ Մուտաղիմ իմացաւ՝ Աֆշինը, իր բանակին հրամանատարը, զրկեց Խթէֆանային նուէրներով, եւ անոնք առին Բարակը եւ սպաննեցին : Որովհետեւ այս մարդը բնաջնջած էր աւելի քան հարիւր հազար արարական զորքեր» :

Նախ նկատի առնենք որ 829ին Բար Հերրայուսի առաջին վկայութեան առա-

ջին մասին պատմութիւնը կը կատարուի 829ին : Այդ առն, այսինքն 829ին, ազանդաւորներուն զլխաւորը Բարակն էր՝ իբր Մահդի : Բարակ 817էն ի վեր առաջնորդն էր ազանդաւորներուն : Բար Հերրայուս Բարակ-Մահդի հետևորդ ազանդաւորները նախ կը կոչէ Քուրտանայեցեցեք, իսկ երկրորդին մէջ կը կոչէ իսկական անուամբ՝ Խառնազգիկներ : Սակայն տեսնենք որ Միքայէլ Ասորի ալ զանոնք Քուրտանի, Քուրտանի, եւն. ձեւով կը կոչէ : Ուրեմն Քուրտանի, Քուրտանայէ ալ կոչուեր են այս ազանդաւորները, եթէ սակայն ազրիւրը, որմէ օգտուած կ'երեւան Բար Հերրայուս եւ Միքայէլ Ասորի՝ ազաւաղուած չէ Խառնազգիկ Քուրտանի վերածուած :

Ազանդաւորներու արշաւանքներու մասին որոշ է որ Միքայէլէ եւ Բար Հերրայուսէ հասած տեղեկութիւնները ազաւաղեալ են : Սահլ Սմբատեանը (Սահլ իսն Մնրատ) Բար Հերրայուսի մօտ Իսաակ Բար-Ահուդի վերածուեր է, որ պէտք է սրբազրել Իսահակ որդի Աշոտի : Հաւանարար ակնարկութիւնը Աշոտ Մսակերի որդի Սահակ Բագրատունիի մասին ըլլայ, անուն մը որ այլուստ ծանօթ ըլլալով Բար Հերրայուսի՝ գուցէ իր կողմէն կամ իր ազրիւրէն շփոթուած ըլլայ եւ նոյնացուած Սահլ իսն Մնրատի հետ : Ամէն պարագայի տակ, Աշոտի որդի Սահակ մը չէ որ Մահդի-Բարակը ձերբակալեց, այլ Սահլ որդի Սմբատի, կամ աւելի ճիշտ՝ Սմբատեան էր ատիկա կատարողը :

Բար Հերրայուս եւ Միքայէլ կը հաստատեն միակ կէտ մը՝ թէ Սահլ Սմբատեան (ըստ առաջնոյն Իսաակ Բար-Ահուդի, իսկ երկրորդին՝ լոկ Սահակ իշխանն Հայկազուն) եղած է Մահդի-Բարակի կալանաւորողը : Թող որ Միքայէլ տարբերութիւն չի դնէր Տաճկաց եւ Քուրտանքի միջեւ, որոնց դէմ կը կուռէր Սահակ-Սահլ :

Բար Հերրայուս եւ Միքայէլ երկուքն ալ կը վկայեն Իսահակ-Իսաակ այսինքն